ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ 1896 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

XIX դարի վերջին Վան քաղաքի բնակչությունը կազմում էր շուրջ 40 հազար մարդ, որից 25 հազարը հայեր էին, իսկ 15 հազարը՝ թուրքեր։ Հայերն ապրում էին գերազանցապես Այգեստան, իսկ թուրքերը՝ Քաղաքամեջ կոչված թաղամասերում։ Վասպուրականի գյուղերում բնակվում էին հայեր ու քրդեր և մասամբ թուրքեր։ Մեծամասնությունը հայեր էին։

Արևմտահայության համընդհանուր կոտորածները իրականացնող սուլթան Աբդուլ Համիդը 1896 թ. հունվարին Վան է ուղարկում իր թիկնապահներից մեկին՝ Սաադեդդին (Սաատեդտին, Սայիդ-Էդդին) փաշային, հանձնարարելով նրան իրագործել Վան-Վասպուրականի հայության ջարդը։

Փաշան նախ փորձում է առիթ ստեղծել հայկական ջարդերի իրագործման համար։ Իշխանության ներկայացուցիչները հունիսի 2-ին խուզարկում են նշանավոր հայդուկ (ֆիդայի) Տիգրան Տերոյանի (Վազգենի) տունը և իբր թե վտանգավոր թղթեր գտնելու պատճառով ձերբակալում են նրա քրոջը՝ վարժուհի Զարուհի Տերոյանին։ Բայց մեծ ոճրագործության համար դա բավական չէր։ Հունիսի 3-ի վաղ առավոտյան քաղաքի շրջակայքում հայտնաբերվում են թուրք հիսնապետի ու զինվորի դիակները։ Լուր են տարածում, թե նրանց սպանել են հայ հեղափոխականները։ Սաադեդդին փաշայի կարգադրությամբ հիսնապետի դիակը ցուցադրվում է քաղաքում, մոլլաները ձոչ են անում՝ «Կոտորել գլավուրներին»։ Դնդապետ Հաշիմ էֆենդին հունիսի 3-ի երկրորդ կեսին, մոտենալով հայոց թաղին, հրամայում է զինվորներին կրակ բացել հայոց թաղի վրա։ Սկսվում է ջարդը[1]։ Դահիճները սպանում են հայերին կացիններով, տապարներով, քարերով, սպանում են ամեն պատահածի, առանց տարիքի ու սեռի խտրության։ Հունիսի 3-ին միայն մի քանի ժամվա ընթացքում զոհվեց 800 մարդ[2]։ Կոտորածներն սկսվեցին այն թաղերից, ուր հայերն ու թուրքերը խառն էին բնակվում, բայց շուտով տարածվեցին ամբողջ Այգեստանում։

Հունիսի 4-ին ջարդերը ծավալվեցին նոր ուժով։ Եվ այդ օրվանից էլ հայերը դիմեցին ինքնապաշտպանության։ Շարժման գլուխ կանգնեցին ազգային կուսակցությունների՝ արմենականների, դաշնակցականների ու հնչակյանների ղեկավարները։ Նրանց միավորեց Վան-Վասպուրականի հայությանը սպառնացող ահավոր վտանգը։

Նույն օրը Մկրտիչ Ավետիսյանի տանը տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցեցին Մ. Ավետիսյանը, Պետոն ու Մարտիկը իրենց դինակիցներով։ Ընդունվեցին որոշումներ, մշակվեց ինքնապաշտպանության կոնկրետ պլան։ Ավետիսյանի տունը դարձավ զինվորական կենտրոն և ռազմամթերքի պահեստ[3]։

Ֆիդայիները վառվում էին թշնամու դեմ պայքարելու բուռն ցանկությամբ, տոգորված էին իրենց հայրենիքի ու ժողովրդի պաշտպանության և

---

1 *Տե՛ս «Արարատ», 1896, օգոստոս, էջ 382։*

2 *Տե՛ս նույն տեղում։*

3 *Տե՛ս «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, 1905, էջ 19։*

ազատության վեհ գաղափարներով։ Նրանք զինված էին հրացաններով, որոնք ձեռք էին բերել հիմնականում Ռուսաստանից և Պարսկաստանից։ Հայ հայրենասերները նաև մարզված էին, գիտեին դիպուկ կրակել, քաջապես ծանոթ էին Վանի թաղերին, փողոցներին ու տներին։ Ֆիդայիները գիտեին նաև, որ իրենց մեջքին կանգնած է հարազատ ժողովուրդը։

Անօրինակ սխրագործություն և հայրենասիրություն ցուցաբերեցին Վանեցի կանայք։ Եղան մայրեր, որոնք իրենց ձեռքերով զենքեր էին կապում որդիների մեջքերին և օրհնելով ուղարկում հակառակորդի դեմ[4]։

Ջարդարարները, անցնելով նոր հարձակման, ձգտեցին ներխուժել Վանի հայաբնակ թաղերը։ «Սակայն այս անգամ,— գրում էր ականատեսը,— նոքա հանդիպեցան հայերի կողմից սաստիկ ընդդիմության։ Վերջինները, ամրանալով յուրյանց տների մեջ, կրակ բացին և թույլ չտվին թշնամուն առաջ գալ»[5]։ Ինքնապաշտպանները մարտնչում էին մեծ համառությամբ ու անձնազոհությամբ։ Առանձին անհատներ դրսևորում էին անձնազոհության վառ օրինակներ։ Հերոսաբար կռվեցին, օրինակ, Արշակ Ջթչյանն ու իր եղբայրը, Քոչարը, Տիգրանը, Տրդատը։ Մուշեղն իր խմբով հարձակվում է հայերին թալանած թուրքերի վրա և սպանելով ու փախուստի մատնելով նրանց, ավարը ետ է բերում[6]։ Հունիսի 4-ին հայերը տվեցին մեկ, իսկ թշնամին՝ 20—30 սպանված[7]։

Հունիսի 5-ին քաղաքի խուժանին միանում են թուրքական զորաջոկատները, ոստիկաններն ու մի շարք քուրդ ցեղապետեր։ Ակտիվ է գործում հատկապես ցեղապետ Շաքիր աղան, սակայն հայերը նրան պատշաճ հակահարված են հասցնում, սպանելով 8—10 հրոսակների։ Շաքիր աղան լրացուցիչ ուժեր է բերում և կառավարական զինվորների հետ միասին անցնում է նոր հարձակման։ Կռիվն ընդունում է կատաղի բնույթ։ Հայերը զարմանալի քաջությամբ մարտնչում են իրենցից անհամեմատ ավելի թշնամիների դեմ։ Ժամանակակիցը գրել է. «Կռիվը բավական կերկարի, հայերը չկարողանալով համբերել դիրքերում, դուրս կուգան ազատ դաշտ և... արտի պատերը պատնեշի տեղ ծառայեցնելով, կռիվը կշարունակեն, միշտ իրենք անվնաս, իսկ թշնամուն մահու գնդակներ ուղարկելով»[8]։ Թշնամին զգալի կորուստներ էր կրում։

Կռիվները շարունակվում են նաև հունիսի 6-ին։ Թշնամու թիվը գնալով աճում է։ Սակայն հայերը դրանցից չեն ահաբեկվում, նրանք պայքարը շարունակում են նոր թափով։ Կատարվում են սխրագործություններ։ Շահ փողոցում հայերը տեսնում են, որ մի ճերմակագլուխ մոլլա իր ետևից քարշ է տալիս հայ օրիորդին, որը ճիգ ու ջանք է թափում, բայց չի կարողանում ազատվել նրա ճիրաններից։ Մի երիտասարդ՝ զեյթունցի Հաջի անունով, առանց դրպե կորցնելու, համբուրվում է ընկերների հետ և մնաք բարով ասելով նրանց, հրացանը ձեռքին վազում է փողոց, անվնաս անցնում է թշնամու գնդակների տարափից, դաշույնը խրում է մոլլայի սիրտը, ազատում է աղջկան և նրա հետ միասին վերադառնում իր դիրքերը։ Ականատեսը գրում էր, որ այդ երիտասարդը վերադարձին, մինչև դիրք հասնելը, ստիպված է լինում փողոցում կես ժամից ավելի կռվել խուժանի դեմ՝ սպանելով իր վրա հարձակվողներին[9]։

Հարկ է նկատել, որ նշված կռիվների ժամանակ բացահայտ խարդախություն է ցուցաբերել անգլիական հյուսլատոս Վիլյամսը, որը, ղեկավարվե-

---

4 «Հայրենիք» շաբաթաթերթ, 1906, հոկտեմբերի 13, № 41։

5 «Արարատ», 1896, օգոստոս, էջ 382։

6 «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, 1905, էջ 20։

7 Տե՛ս «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 113։

8 Նույն տեղում, էջ 113։

9 Նույն տեղում, էջ 118։

լով իր պետության թուրքամետ քաղաքականությամբ, ձգտել է ճնշել վանեցիների դիմադրությունը։

Հունիսի 7-ին նա հրավիրում է խորհրդակցություն, որին մասնակցում են Վանի հայոց առաջնորդ վարդապետ Բագրևանդյանը, կուսակալ Նազրմ բեյը, պարսկական ու ռուսական հյուպատոսությունների ներկայացուցիչները, ամերիկյան միսիոներ Ռեյնոլդսը, հայերից՝ Մ. Ավետիսյանը, Պետոն ու Մարտիկն իրենց 40 թիկնապահներով։ Վիլլյամսը հայտարարում է, թե Սաադեդդին փաշան առաջարկում է, որ ապստամբ հեղափոխականները հանձնվեն, հակառակ դեպքում թնդանոթներով կավերի նոանց դիրքերը։ Ավետիսյանը պատասխանում է, որ իրենք ապստամբներ չեն, այլ ինքնապաշտպաններ[10]։ Փորձեր են արվում խաբելու հայերին։ Հասկանալով այդ, նրանք չեն համաձայնում անգլիական հյուպատոսի առաջարկին՝ զենքը վայր դնել և հանձնվել թշնամուն։ Հայերի ղեկավարները, արտահայտելով ինքնապաշտպանների կամքը, հայտարարում են. «Կմղենք ինքնապաշտպանության սուրբ կռիվը մինչև վերջին շունչը, կմեռնինք սուր ի ձեռին և նախատինք կհամարենք վատությամբ իջեցնել մեր դրոշակը»[11]։

Հունիսի 8-ին որոտացին կառավարության թնդանոթները, ավերելով հայոց թաղերն ու տները։ Դրանում թուրքերին լրջորեն օգնեց անգլիական հյուպատոսը։ Հ. Երամյանը նշում է, որ նա, ունենալով թնդանոթաձգի կրթություն, ծպտյալ շրջել էր հայկական դիրքերը, ճանաչել նրանց դասավորությունը և խորհուրդ էր տվել թուրքերին, թե ինչպես պետք է ռմբակոծել, որ հայերը կոտորվեն[12]։ Հայերը ցուցաբերում են հերոսական դիմադրություն։ Նրանք ետ են շպրտում թշնամուն։ Հակառակորդը ստիպված է լինում թողնել թնդանոթները փողոցներում ու հավաքելով իր զոհերը, փախչել[13]։

Սաադեդդին փաշան ավելի է գազազում։ Նա հրամայում է բերդից այդեստան բերել գերմանական «Կրուպ» մակնիշի կատարելագործված թնդանոթներ[14]։ Կռիվը դառնում է ավելի կատաղի։ Ինքնապաշտպանները հոգնած էին ու սոված, բայց մարտնչում էին խիզախորեն։ Թշնամին կորցնում է ավելի քան 200 մարդ։ Սակայն ինքնապաշտպանների վիճակը գնալով ծանրանում է, ջարդարարները մարտի են նետում նորանոր ուժեր, հասցնելով իրենց հրոսակների թիվը մինչև 15 հազարի[15]։

Ավետիսյանը և նրա զինակիցները զգում են, որ այլևս անհնար է դիմադրել ժամ առ ժամ համալրվող հակառակորդին։ Ուստի որոշում են դուրս գալ քաղաքից, հույս ունենալով, որ թշնամին թերևս դադարեցնի իր հայաջինջ գործողությունները։ Հունիսի 8-ի լույս 9-ի գիշերը նրանք վերցնում են շուրջ 1500 դինված ու անզեն մարդ և բարձրանում Վարագա լեռ[16]։ Հայդուկները հզոր թշնամուն դիմադրեցին հինգ օր։ Դա քիչ չէր։ Անգլիական հյուպատոսն ասել էր. «Ես չէի կարծեր, որ հայերն այդչափ կազմակերպված լինեին»[17]։

Հեղափոխականների այդ պայքարը մեծ նշանակություն ունեցավ Վան-Վասպուրականի հայության համար։ Խնդիրը միայն այն չէ, որ եթե նրանք չդիմադրեին, ինչպես նշում էր ժամանակակիցներից մեկը, ավելի շատ կկո-

---

10 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, 1905, էջ 45։

11 «Հայրենիք» շաբաթաթերթ, 1906, օգոստոսի 25, № 34։

12 Տե՛ս Համբարձում Երամյան. Հուշարձան Վան Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 363։ Արսեն Ա. Կեորկիզյան. Վասպուրականի հերոսամարտը 1915, 7 ապրիլ—1915 մայիսի 7, Պեյրութ, 1965, էջ 28—29։

13 Տե՛ս «Արաքս», գիրք Բ, 1897, էջ 119։

14 Տե՛ս նույն տեղում, էջ 120։

15 Տե՛ս «Արարատ», 1896, նոյեմբեր, էջ 528։

16 Նույն տեղում, օգոստոս, էջ 383։

17 «Հայրենիք» շաբաթաթերթ, 1906, հուլիսի 28, № 30։

տորվեին[18], այլ նաև այն, որ նրանք հնարավորություն տվեցին քաղաքի հայերին մտնելու անգլիական, ռուսական պարսկական հյուպատոսարաններ, կաթոլիկ ու բողոքական միսիոներների շենքերն ու նրանց մերձակա տները՝ պատսպարվելու և փրկվելու։

Իշխանությունները չհետապնդեցին Վանից հեռացող հեղափոխականներին, այլ նետվեցին քաղաքում մնացած անզեն ու անպաշտպան հայերի վրա և շարունակեցին սպանել ու թալանել նրանց։ Դա մի անգամ ևս ապացուցում է, որ կառավարությունը հալածում էր ոչ այնքան հեղափոխականներին, որքան նրանց որսալու պատրվակով իրագործում էր հայ խաղաղ բնակչության ջարդեր։

Հունիսի 9-ին Սաադեդդին փաշան Վանի երևելիներին առաջարկում է մի աղերսագիր ներկայացնել, որի մեջ գրված լինի, թե քաղաքում ու նրա շրջակայքում տեղի ունեցած «անկարգությունները» կատարվել են դրսից եկած հայ հեղափոխականների մեղքով, թե նրա տակ ստորագրողները նեղություն են խնդրում սուլթանից և աղաչում են նրան նահանգում խաղաղություն ու հանգստություն վերահաստատել։ Հատկանշական է, որ այդ խնդրագրի տեքստը պատրաստում էր անգլիական հյուպատոս Վիլյամսը։ Սաադեդդին փաշան առաջին ու երկրորդ տեքստերը չի հավանում, երրորդը մի կերպ ընդունում է և ուղարկում մայրաքաղաք։ Խնդրագրի մեջ հայ երևելիները հատուկ շնորհակալություն են հայտնում Սաադեդդին փաշային՝ իբր թե հայերի հանդեպ ցուցաբերած հոգատարության համար։ Հունիսի 10-ի երեկոյան մայրաքաղաքից հայտնում են, որ սուլթանը ընդունել է Վանի հայության խնդրանքը և շուտով կբավարարի այն[19]։

Չնայած դրան Սաադեդդին փաշան հայերի հանդեպ բռնությունները շարունակում է հունիսի և՛ 9-ին, և՛ 10-ին։ Նա պահանջում է խուզարկել հյուպատոսարանները, կաթոլիկ ու բողոքական միսիոներական հաստատությունները, հայտարարելով, թե այդ տեղերում անզեն մարդկանց հետ միասին թաքնված են զինված երիտասարդներ։ Անգլիական հյուպատոսը կատարում է նրա կարգադրությունը, առաջարկելով իր պաշտպանության տակ մտած 15—60 տարեկան բոլոր տղամարդկանց հեռանալ հյուպատոսարանից։ Ականատեսը հաղորդում էր. «Գրիչը կարող չէ նկարագրել այն սոսկալի արհավիրքը, լաց ու կոծը, ողբն ու աղաղակը, որ կտիրե ժողովրդի մեջ։ Կանայք ու տղաները կկոծեն ու կողբան, կարծելով, որ իրենց ամուսիններն ու հայրերը դուրս կհանվեն խուժանի կատաղությանը ենթարկելու համար, շատերը մինչև իսկ վերջին հրաժեշտը կտան իրենց ընտանյաց»[20]։

Սաադեդդին փաշայի հրամանը կատարում է նաև ԱՄՆ-ի միսիոներների ղեկավար Ռեյնոլդսը։ Նա գործում էր բրիտանական հյուպատոսի հետ համատեղ։ Շրջելով իր հաստատություններում պատսպարված հայերի մեջ, հայտարարում էր, որ եթե կան հեղափոխականներ, որոնք պատճառ են դարձել այս արյունահեղություններին, ցույց տվեք, կամ դուրս արեք, «ապա թե ոչ ձեզ բոլորիդ կկոտորեն...»[21]։

Ինչպես անգլիական հյուպատոսարանում, այնպես էլ Ռեյնոլդսի հաստատություններում պատսպարվածները փողոց են նետվում, նրանցից մի մասը սրի է քաշվում, մյուսը՝ թաքնվում է լեռներում ու ձորերում, երրորդը գնում է միանալու այն խմբերին, որոնք բռնել էին Պարսկաստանի ճամփան։ Վանի ռուսական փոխհյուպատոս Վ. Տ. Մաևսկին հունիսի 1—16-ը գտնվում էր Թիֆլիսում։ Նրա պարտականություններն այդ օրերին կատարում էր հյուպատոսության թարգմանիչ Կարապետ Չիլինգարյանը։ Երբ Սաադեդդինը նրան առաջարկեց տեղափոխվել բերդ, Չիլինգարյանը համարձակո-

18 Տե՛ս «Արարատ», 1896, հուլիս, էջ 383։

19 Նույն տեղում, օգոստոս, էջ 383։

20 «Արաքս», գիրք Բ, 1897, էջ 122։

21 «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, 1905, էջ 109։

րեն պատասխանեց. «Ես կապրիմ իմ կառավարության դրոշակի տակ և թե կարելի եղածին չափ պիտի ջանամ նույն դրոշակի հովանու տակ հովանավորել անդեն ժողովրդին»[22]։ Նա չկատարեց նաև փաշայի հրամանը իր հյուպատոսությունում պատսպարված հայ տղամարդկանց մեջ ստուգում անցկացնելու և հիշատակված տարիքի անձանց վտարելու մասին։ Ջիլինգարյանն այդպիսով հազարների փրկեց անվերապահ կործանումից[23]։

Սաադեդդին փաշան կարգադրում է խուզարկել Քաղաքամիջի հայերի տները, խրախուսում է շարունակել հայերի ունեցվածքի կողոպուտն ու թալանը։ Եվ զինվորները, ոստիկանները, խուժանը, որոնց շարքերում նաև Վանի բոշաները, հունիսի 9-ին ու 10-ին ևս շարունակում են վայրագությունները։ Նրանք մտնում են իրենց զոհերի տները և հափշտակում ինչ կարողանում են։ Միայն Այգեստանում նրանք խլեցին հայերից մեկ միլիոն օսմանյան ոսկու կարողություն։ Զբավարարվելով այդ ամենով, Սաադեդդին փաշան հրամայում է հրկիզել հայերի տները։ Նրա հրամանը կատարվում է։ Հրդեհը այնպիսի մեծ ուժով է ծավալվում, որ ականատեսի խոսքով ասած, հրկիզված շինությունների ծխից Արեգակի լույսն աղոտանում է, իսկ գիշերները փողոցներն ու թաղամասերը լուսավորվում են մինչև երկինք բարձրացող բոցերից[24]։ Հայկական թաղերն ու տները մոխրակույտի են վերածվում[25]։

Սուլթանական կառավարության կարգադրությամբ Վանից հետո (իսկ որոշ տեղերում նաև միաժամանակ) հայերի կոտորածներ են իրագործվում Վասպուրականի գյուղերում։ Կոտորածները սոսկալի եղան հատկապես Արճեշի, Հայոց Ձորի, Գավաշի, Կարճկանի և այլ գավառների գյուղերում[26]։

Ա—ԴՕի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) վկայությամբ Քյոռ Հուսեին փաշայի «ձեռքով կողոպտվեց և ավերվեց ամբողջ Ալչավազը, բարբարոս կերպով սպանվեցին բազմաթիվ հայեր... հրդեհվեցին գյուղեր և տներ...»[27]։ Հուսեյին փաշային իր ոճրագործություններով գերազանցեց նրա հորեղբոր որդին՝ Էմին փաշան։ Նա սրի քաշեց Արճեշի բոլոր գյուղերը։ Ա—ԴՕն գրում է. «Մարդկանց ու կանանց շարքով կանգնեցնում էին և նշան առնելով, նրանց մեկ-մեկ գնդակահարում, ապա գնդակներին խնայելով, սկսեցին կոտորել նրանց սրերով և բութ գործիքներով. փոքրիկ երեխաներին ոտներից բռնելով և օդի մեջ առնելով ծեփում էին պատերին և սպանում, կանանց և օրիորդներին բռնաբարում էին ծնողների ու ամուսինների ներկայությամբ, իսկ այս բոլորից հետո կենդանի մնացած մի քանի պառավ կանանց և երեխաների սպանում են ամենավայրագ ձևով»[28]։

Միայն Մոկսի մյուդիր Սարթուլլա բեյն էր, որ ցուցաբերեց բոլորովին այլ վարքագիծ։ Նա ոչ միայն չկոտորեց իր իշխանության տակ գտնվող հայ գյուղացիներին, այլև սովյալներին կերակրելու համար նվիրեց 250—300 թուրքական լիրա[29]։ Թուրք չարդարարները ավերեցին հայոց վանքերը, եկեղեցիները, դպրոցները։ Սպանեցին Վարագա միաբան Արիստակես Տեկանցին,

---

22 «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 124։

23 Տե՛ս «Արձագանք», 1897, հունվարի 1։

24 «Արարատ», 1896, նոյեմբեր, էջ 528։

25 «Արաքս», 1898, գիրք Ա, էջ 114։

26 Տե՛ս В. Т. Маевский. Ванский вилайет, военно-статистическое описание. Тифлис, 1901, с. 180.

27 Ա—ԴՕ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 358։

28 Նույն տեղում, էջ 360։

29 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի ու նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ. Երևան, 1991, էջ 155։ Տե՛ս նաև Հ. Երամյան. նշվ. աշխ., էջ 374։

Հարություն վարդապետին, վանահայր Դանիել վարդապետին և շատ այլ հոգևորականների։ Ոմանց նույնիսկ ողջակիզեցին[30]։

Վասպուրականի մի քանի վայրերում գյուղացիները դիմադրավեցին բարբարոսներին։ Աչքի ընկավ հատկապես Շատախը։ «Քաջ շատախցիները,— գրել է Հ. Երամյանը,—իրենց ավանդական համբավն արդարացուցին զորեղ դիմադրություն մը կազմակերպելով ամենուր հարձակվող թուրքերու և թուրք զինվորներու դեմ»[31]։ Ջարդարարներին դիմադրեցին նաև Արճեշի Աստաֆ, Բանոն և Հայոց Ձորի Հնդստան գյուղերը[32]։

Ի՞նչ եզան Վանից դուրս եկած և Վարագա սարը բարձրացած հայ հայդուկները. կար երկու ելք. կամ անցնել Շատախ ու Գյավաշ և լեռներում շարունակել կռիվը թշնամիների դեմ կամ գնալ Պարսկաստան և այնտեղ որոշել ապագա անելիքները[33]։ Նկատի ունենալով այն, որ ռազմամթերքը քիչ է, նրանք որոշում են մեկնել Պարսկաստան։ Ավետիսյանն իր 300 զինվածներին միացնելով 300 անզեններ, բաժանում է նրանց հիսունյակների ու հարյուրակների և հունիսի 10-ին Խոշաբ-Բաշկալա գծով ճանապարհ է ընկնում դեպի Պարսկաստան[34]։

Սաադեդդին փաշան հեռագրում է Խոշաբի, Բաշդալեի, Սարայի և այլ գավառների պետերին ու քրդական ցեղապետերին՝ «անպայման կոտորել հայ ֆետայիներին՝ ինչ գնով որ կարելի էր»[35]։ Եվ նրա գործակալները հետապնդում են հեղափոխականներին։

Շուտով Ավետիսյանն իր խմբով մտնում է հայկական Հնդստան գյուղը, ուր ապրում էին նաև մի քանի քուրդ ընտանիքներ։ Սրանք աղաչում են խնայել իրենց։ Ավետիսյանը ոչ միայն չի սպանում, այլև բարեկամություն է առաջարկում, դրելով նրանց բեգին, թե ինքը գոհ է, որ նա չի կոտորել հայերին, որ շատ լավ կլիներ, եթե մյուս քուրդ բեգերն էլ այդպես վարվեին։ Այն ժամանակ հայերն ու քրդերը միավորվելով «իրենց դարավոր թշնամի օսմանցիների դեմ, շուտով պիտի կարողանային իրենց ստրկության շղթան փշրել»։

Հունիսի 13-ին Ավետիսյանի խումբը Գյուղել-Դարա Ձորում բախվում է թշնամիների հետ և տանում փայլուն հաղթանակ։ Անզենների մի մասը, շուրջ 125 հոգի, թողնում են Ավետիսյանի խումբը և վերադառնում Վան[36]։ Հունիսի 14-ին հայդուկները Ձուխից իջնելով Աղբակի դաշտ, Բարդուղիմեոս Առաքյալ վանքի շրջակայքում պաշարվում են թուրքական ու քրդական մեծաթիվ ուժերի կողմից[37]։ Ավետիսյանը կարգադրում է պատռել օղակումը և դուրս գալ ծուղակից։ Մարտիկները չեն կարողանում կատարել դա։ Վերջանում են փամփուշտները։ Հայդուկները ջարդում են իրենց հրացանները, որ դրանք չընկնեն թշնամու ձեռքը։ Նրանք դյուցազնական կռիվը շարունակում են ատրճանակներով ու սրերով, դաշույններով ու դանակներով։ Սակայն զոհվում են համարյա բոլորը, այդ թվում և Մ. Ավետիսյանը։ Զոհվում են 340 մարդ։ Այդ նույն ժամանակ թշնամին հողին է հանձնում իր մեռելներին, որոնց թիվը քիչ չէր՝ 1700 մարդ[38]։ Հայդուկները գիտեին արյունը հատուցել արյունով։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը տարբեր տեղեկություններ են տալիս այն մասին, թե որքան մարդ ողջ մնաց Ավետիսյանի խմբից։ 1896 թ. «Արա-

---

30 Տե՛ս «Արարատ», 1896, դեկտեմբեր, էջ 585։

31 Հ. Երամյան. նշվ. աշխ., էջ 375։

32 Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898, с. 130.

33 «Հայրենիք» շաբաթաթերթ, 1906, նոյեմբերի 24, № 47։

34 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1905, սեպտեմբերի 20, էջ 140։

35 «Հայրենիք» շաբաթաթերթ, 1907, մարտի 22, № 9։

36 Տե՛ս «Պայքար» օրաթերթ, 1957, հունիսի 13։

37 Տե՛ս «Դրոշակ», 1896, օգոստոսի 15, № 19, էջ 139։

38 Տե՛ս «Պայքար» օրաթերթ, 1957, հունիսի 15։

րատը» նշում էր, թե 6 հոգի, որոնք ձերբակալվեցին ու բանտարկվեցին սկզբում Բաշկալեում, հետո տեղափոխվեցին Վանա կենտրոնական բանտը[39]։ Նույն թվականին «Դրոշակը» հաղորդում էր, որ Ավետիսյանի զինակիցներից փրկվեցին հազիվ 30 հոգի[40]։ Շուրջ 10 տարի անց այդ թիվն էր ցույց տալիս նաև «Երիտասարդ Հայաստանը», գրելով, թե նրանք մազապուրծ հասնում են Սալմաստ[41]։ 1957 թ. Մուշեղ Բազեյանը հուշագրում է, որ Ավետիսյանի խմբից ազատվում են 25—30 հոգի, որոնք մի կերպ անցան Պարսկաստան, իսկ ինքն ու 19 զինված և 22 անզեններ հազիվ կարողացան վերադառնալ Վարագա վանք[42]։

Ավետիսյանի խումբն ամենաբազմամարդն էր։ Պետոյի ու Մարտիկի խմբերն անհամեմատ փոքրաթիվ էին։ Վանից Վարագ բարձրանալուց հետո Ավետիսյանի խումբը, ինչպես ասվեց, շարժվում է դեպի Պարսկաստան, իսկ Պետոյի ու Մարտիկի խմբերը առժամանակ մնում են Վարագա սարում։ «Արարատի» թղթակիցը նրանց բաժանման պատճառը վեճն է համարում, բայց չի նշում, թե ինչ վեճ է եղել դա։ Սակայն Կիտուրն այդ վեճի պատճառը համարում է այն, որ «Մարտիկն ու Պետոն դեմ էին անզենների ընկերակցությանը, իսկ Ավետիսյանը կողմնակից էր»[43]։ «Արարատի» թղթակիցը այնուհետև վկայում է, որ Պետոյի ու Մարտիկի խմբերը փոքր ուշ նույնպես ուղղություն են վերցնում դեպի Պարսկաստան[44]։ Դեպքերին մասնակից Մուշեղ Բազեյանը, որևէ բան չասելով հայդուկապետերի միջև առաջացած վեճի մասին, գրում է, որ Պետոյի ու Մարտիկի խմբերը շարժվում են Պարսկաստան Պողաղ-Քեսենով և Պեզի-Տաղի լեռներում (Գարահիսար) պաշարվում են իրենցից 10 անգամ շատ քրդերի կողմից ու գլխովին ջախջախվում։ Փրկվում են միայն նրանց ուղեկից 2 ասորիներ[45]։ «Արաքսի» թղթակիցն այդ առթիվ գրում էր, որ մեր երիտասարդները 10—12 օր անքուն ու սոված «մղում են դյուցազնական անվեհերությամբ իրենց վերջին հուսահատական և օրհասական կռիվը մինչև վերջին շունչը և մեռնում են բոլորն էլ նահատակների սուրբ մահով նվիրված իրենց անձկալի հայրենիքին ու սիրելիներին»[46]։

Կոտորածներից հետո Վասպուրականի բոլոր հայաբնակ վայրերում մոլեգնեց սովը։ Միայն Վանում սովյալների թիվը հասավ 30 000-ի[47]։ Միաժամանակ ծայր առավ Վասպուրականի հայության արտագաղթը՝ գլխավորապես դեպի Ռուսաստան՝ Անդրկովկաս, բայց նաև Ամերիկա, Պարսկաստան ու այլ երկրներ։ Բազմաթիվ գյուղեր ուղղակի դատարկվում էին։ Այսպես, Արճեշի գավառի Գանձակ գյուղի 42 տնից դաղթեց 40-ը, Ծայծակ գյուղի 40 տնից՝ 37-ը, Ջուզեահ գյուղի 60 տնից՝ 56-ը, Աղստաֆ գյուղի 130 տնից՝ 110-ը, իսկ «Արմիզոն գյուղի 43 տնից չմնաց և ոչ մեկը»[48]։

Ա—ԴՕն 1896 թ. հունիսյան ջարդերից հետո ընկած ժամանակաշրջանը բնութագրում էր «լուռ ժամանակաշրջան», որը տևեց մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը։ Այդ տարիներին ևս մեծ չափերի հասան հողային գրավումները, գույքային հափշտակությունները և այլ կարգի ճնշումները[49]։

---

39 Տե՛ս «Արարատ», 1896, դեկտեմբեր, էջ 580։

40 Տե՛ս «Դրոշակ», 1896, օգոստոսի 15։

41 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, 1905, էջ 159։

42 Տե՛ս «Պայքար» օրաթերթ, 1957, հունիսի 16։

43 Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 193։

44 Տե՛ս «Արարատ», 1896, դեկտեմբեր, էջ 579—580։

45 Տե՛ս «Պայքար» օրաթերթ, 1957, հունիսի 16։

46 «Արաքս», 1898, գիրք Ա, էջ 115։

47 «Լումա», գիրք Ա, 1899, էջ 198—199։

48 Ա—ԴՕ, նշվ. աշխ., էջ 317։

49 Նույն տեղում, էջ 320։

Այդպիսով, 1896 թ. հունիսյան ջարդը Վան-Վասպուրականում սուլթանական կառավարության կողմից նախապես մշակված՝ արևմտահայերի կոտորածների պետական քաղաքականության դրսևորումներից մեկն էր։ Եղեռնագործները իրագործեցին այն իրենց հատուկ վայրագություններով։

Ազգային կուսակցությունները, գիտակցելով, որ կոտորածները վաղ թե ուշ իրագործվելու են նաև Վան-Վասպուրականում, նախապես պատրաստվեցին ինքնապաշտպանության, ներմուծելով զենք ու զինամթերք և ստեղծելով մարտական խմբեր։ Այդ ինքնապաշտպանությունը, որին գործուն մասնակցություն ունեցան արմենականները, հնչակյանները և դաշնակցականները գլխավորեց արմենական Մկրտիչ Ավետիսյանը։ Ճգնաժամային պահին նա կարողացավ համախմբել քաղաքական հարցերում տարբեր տեսակետների վրա կանգնած կուսակցություններին և դուրս բերել նրանց ոսոխի դեմ։

Անհավասար կռվում հեղափոխականները թեև պարտվեցին, բայց նրանց գործը մնաց անմահ։ Պատմությունը դատապարտել է ու կդատապարտի ոճրագործներին և փառաբանել է ու կփառաբանի ազատության ու անկախության համար պայքարողներին։ Ազգային քաղաքական ուժերի համախմբումը ուսանելի երևույթ է մեր ժողովրդի պատմության մեջ։ Վանի հայությունը 1915 թ. կոտորածների օրերին, օգտագործելով 1896 թ. համախմբման փորձը, փայլուն հաղթանակ տարավ ոխերիմ թշնամու նկատմամբ։

САМООБОРОНА АРМЯН В ВАН-ВАСПУРАКАНЕ В 1896 ГОДУ

Доктор ист. наук А. С. АМБАРЯН

Резюме

В начале июня 1896 г. кровавый султан Абдул Гамид проводил политику геноцида и в Ван-Васпуракане. Армянские национальные партии—арменаканы, дашнаки и гнчакисты—объединились и оказали героическое сопротивление погромщикам. Они спасли много мирных жителей, но силы были неравны. Противник истребил тысячи людей. Самооборона армян в Ван-Васпуракане—одна из славных страниц в истории освободительной борьбы армянского народа.